


Փաստ. անվանումը	ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-28-01
Հաստատման ամսաթիվը	01/03/2012
Արձանագրության N	03/11-12
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ , Սուրեն Օհանյան
Մշակող	Կադրերի բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Կադրերի բաժին



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
24.11.2015	Վերանայված է, կատարված է լրացումներ, ամբողջությամբ խմբագրված է	Գիտական խորհուրդ Սուրեն Օհանյան 

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ.....	4
3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ.....	10
4. ՊԱՏԿԱԿՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԿԱՐԳԸ.....	12
5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ.....	13

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետև՝ ԵՄՀ-ի) պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, առաջաջանման, բացառիկ դեպքերում՝ պաշտոններում՝ նշանակման և պայմանագրի վերակնքման սկզբունքները:
- 1.2. ԵՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրության և սույն կարգով մրցույթի անցկացման եւ արդյունքների հիման վրա պայմանագրի ձեւակերպման միջոցով:
- 1.3. ԵՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի և ՄՈՒՀ-ի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային (կոնտրակտային) հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը (բացառությամբ նրա հետ կնքված պայմանագրի վերակնքման և մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերի):
- 1.4. Ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների, ավագ դասախոսների, դասախոսների և սեմինարավարների թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրով, մինչև 5 տարի ժամկետով: Ամբիոնի առաջարկությամբ ֆակուլտետի խորհուրդը կարող է դիմել ռեկտորին՝ 1-3 տարով կնքված պայմանագրերը երկարաձգելու մինչև 5 տարի, առանց նոր մրցույթ հայտարարելու: Մրցույթով անցած մեկից ավելի թեկնածուների դեպքում պայմանագիր է կնքվում նրանցից առավելագույն միավոր ստացած անձի հետ:

2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

- 2.1. ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս:
- 2.2 Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝
 - հավակնորդի որակավորման (ակադեմիական) աստիճանը, գիտական աստիճանը և գիտական կոչումը,
 - մանկավարժական աշխատանքի ստաժը,
 - ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության ձևերը, ներուժը և դրանց քանակական ցուցանիշները,
 - դասախոսի ինքնագնահատումը,
 - ամբիոնի վարիչի դասալսումների արդյունքները (եթե դասախոսն աշխատում, կամ նախկինում աշխատել է ԵՄՀ-ում),
 - ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը (եթե դասախոսն աշխատում, կամ նախկինում աշխատել է ԵՄՀ-ում):

2.3 Պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել այն անձինք ովքեր ունեն՝
Կրթությունը.

պրոֆեսորի գիտական կոչում, կամ գիտությունների դոկտորի գիտական աստիճան,

Աշխատանքային փորձառությունը

առնվազն 9 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ, որից ոչ պակաս քան 5 տարին դոցենտի պաշտոնում, միջազգային մակարդակի 10 տպագրված աշխատանք/ ցանկալի է/

Հնտություններ և կարողություններ

մանկավարժական աշխատանքի հմտություններ

ուսուցման համագործակցային մեթոդների կիրառման հմտություններ դասընթացի մշակման, կառավարման կարողություններ հետազոտական հմտություններ

Անձնային հատկանիշներ

ժամանակի կառավարման հմտություններ
ինքնուրույն և թիմում աշխատելու հմտություններ

Հատուկ գիտելիքներ

ուսուցման համագործակցային մեթոդների իմացություն
օտար լեզուների իմացություն
համակարգչային հմտություններ
հետազոտական հմտություններ

2.3.1 Պրոֆեսորի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- դասախոսությունների վարում բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով,
- մագիստրանտների և ասպիրանտների թեզերի և ատենախոսությունների ղեկավարում, գիտնականների պատրաստում,
- դասալսուցների անցկացում,
- ուսումնամեթոդական և ուսումնական դասընթացների պատրաստում
- ստուգարքների և քննությունների անցկացում,
- մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների ու դասընթացների հիմնում և կազմակերպում,
- դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերի, օրացուցաթեմատիկ պլանների և դասավանդվող նյութերի(հոդվածներ, դասագրքեր, ներկայացումներ, աուդիո և վիդիո հոլովակներ) նախապես վերբեռնում ԵՄՀ վիրտուալ լսարանում
- կրթական գործընթացի բարձր արդյունավետության ապահովում՝ զարգացնելով ուսանողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները,
- մասնակցություն արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերի մշակմանը և դրանց ղեկավարում,
- զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- գիտամեթոդական սեմինարների անցկացում,
- ատենախոսության (թեկնածուական, դոկտորական) պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես, գիտական մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում,
- մասնագիտական վերապատրաստման և ինքնազարգացման նպատակով հետազոտական աշխատանքների իրականացում
- հատուկ վարպետության դասերի անցկացում
- ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
- մասնակցություն բուհական և արտասահմանյան գիտակազմակերպական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին,
- իր կողմից դասավանդվող նյութերի որակի և արդիականության ապահովում, կրթական բովանդակության թարմացում և վերանայում,անհրաժեշտության դեպքում առարկայական ծրագրի վերանայման առաջարկում և իրականացում
- մասնակցություն կրթական, առարկայական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական ուսումնական այլ նյութերի մշակմանը
- մասնագիտական որակավորման, մանկավարժական վարպետության և գիտական փորձի կատարելագործում

- մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին
- մասնակցություն ամբիոնի, հրավերի դեպքում մեթոդական և գիտական խորհրդի նիստերին
- խորհրդատվական գործունեություն,
- ռեկտորի հանձնարարականով ԵՄՀ-ի ներկայացում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում, մասնակցություն ԵՄՀ-ի կողմից տարվող դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին
- սեփական հետազոտական աշխատանքների արդյունքների տարածման նպատակով ներկայացումների և քննարկումների նախաձեռնում և իրականացում

2.4 Դոցենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել այն անձինք ովքեր ունեն¹՝

Կրթությունը.

դոցենտի գիտական կոչում, կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,

Աշխատանքային փորձառությունը

4 տարուց ոչ պակաս մասնագիտական աշխատանքային փորձ, 7 միջազգային մակարդակի տպագրված աշխատություններ /ցանկալի է/:

Հմտություններ և կարողություններ

մանկավարժական աշխատանքի հմտություններ ուսուցման համագործակցային մեթոդների կիրառման հմտություններ դասընթացի մշակման, կառավարման կարողություններ հետազոտական հմտություններ

Անձնային հատկանիշներ

ժամանակի կառավարման հմտություններ ինքնուրույն և թիմում աշխատելու հմտություններ

Հատուկ գիտելիքներ

ուսուցման համագործակցային մեթոդների իմացություն օտար լեզուների իմացություն համակարգչային հմտություններ հետազոտական հմտություններ

2.4.1 Դոցենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- դասախոսությունների վարում բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով,
- բակալավրի ծրագրով ուսումնառուների ավարտական աշխատանքներ, մագիստրանտների և ասպիրանտների թեզերի և ատենախոսությունների ղեկավարում,
- ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում
- կրթական գործընթացի բարձր արդյունավետության ապահովում՝ զարգացնելով ուսանողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները,
- քննությունների և ստուգարքների անցկացում
- դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերի, օրացուցաթեմատիկ պլանների և դասավանդվող նյութերի(հոդվածներ, դասագրքեր, ներկայացումներ, աուդիո և վիդիո հոլովակներ) նախապես վերբեռնում ԵՄՀ վիրտուալ լսարանում
- գիտամեթոդական սեմինարների անցկացում,
- մասնակցություն արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերի մշակմանը և դրանց ղեկավարում

¹ յուրաքանչյուր ՄԿԾ-ի պահանջներից ելնելով մասնագիտական հստակ պահանջները առավել մանրամասն ներկայացված են աշխատանքային նկարագրերում

- մասնակցություն կրթական, առարկայական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական ուսումնական այլ նյութերի մշակմանը
- մասնագիտական որակավորման, մանկավարժական վարպետության և գիտական փորձի կատարելագործում
- մասնագիտական վերապատրաստման և ինքնազարգացման նպատակով հետազոտական աշխատանքների իրականացում
- գեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին,
- թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների իրատարակում.
- իր կողմից դասավանդվող նյութերի որակի և արդիականության ապահովում, կրթական բովանդակության թարմացում և վերանայում,անհրաժեշտության դեպքում առարկայական ծրագրի վերանայման առաջարկում և իրականացում
- մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին
- մասնակցություն ամբիոնի, հրավերի դեպքում մեթոդական և գիտական խորհրդի նիստերին
- խորհրդատվական գործունեություն,
- ռեկտորի հանձնարարականով ԵՄՀ-ի ներկայացում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում, մասնակցություն ԵՄՀ-ի կողմից տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին
- սեփական հետազոտական աշխատանքների արդյունքների տարածման նպատակով ներկայացումների և քննարկումների նախաձեռնում և իրականացում

2.5 Ասիստենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել այն անձինք ովքեր ունեն²

Կրթությունը.

համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճանի առկայություն, կամ ասպիրանտուրան ավարտելու մասին տեղեկություն

Աշխատանքային փորձառությունը

3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ (այն ոլորտում, որի գծով ասիստենտը պետք է դասավանդի և վարի դասընթացներ), 5 միջազգային մակարդակի տպագրված աշխատություններ /ցանկալի է/:

Հմտություններ և կարողություններ

մանկավարժական աշխատանքի հմտություններ
 ուսուցման համագործակցային մեթոդների կիրառման հմտություններ դասընթացի մշակման, կառավարման կարողություններ
 հետազոտական հմտություններ

Անձնային հատկանիշներ

ժամանակի կառավարման հմտություններ
 ինքնուրույն և թիմում աշխատելու հմտություններ

Հատուկ գիտելիքներ

ուսուցման համագործակցային մեթոդների իմացություն
 օտար լեզուների իմացություն
 համակարգչային հմտություններ
 հետազոտական հմտություններ

² յուրաքանչյուր ՄԿԾ-ի պահանջներից ելնելով մասնագիտական հստակ պահանջները առավել մանրամասն ներկայացված են աշխատանքային նկարագրերում

2.5.1 Ասիստենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- դասախոսությունների, գործնական պարապմունքների վարում (մագիստրատուրայում և բակալավրիատում),
- կրթական գործընթացի բարձր արդյունավետության ապահովում՝ զարգացնելով ուսանողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները,
- բակալավրի ծրագրով ուսումնառուների ավարտական աշխատանքներ, մագիստրանտների թեզերի ղեկավարում,
- քննությունների և ստուգարքների անցկացում
- ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում,
- մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների ղեկավարում,
- դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերի, օրացուցաթեմատիկ պլանների և դասավանդվող նյութերի(հոդվածներ, դասագրքեր, ներկայացումներ, աուդիո և վիդիո հոլովակներ) նախապես վերբեռնում ԵՄՀ վիրտուալ լսարանում
- ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում
- մասնակցություն կրթական, առարկայական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական ուսումնական այլ նյութերի մշակմանը
- մասնագիտական վերապատրաստման և ինքնազարգացման նպատակով հետազոտական աշխատանքների իրականացում
- մասնակցություն արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերի մշակմանը և դրանց ղեկավարում
- իր կողմից դասավանդվող նյութերի որակի և արդիականության ապահովում, կրթական բովանդակության թարմացում և վերանայում,անհրաժեշտության դեպքում առարկայական ծրագրի վերանայման առաջարկում և իրականացում
- մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
- մասնակցություն ամբիոնի, հրավերի դեպքում մեթոդական և գիտական խորհրդի նիստերին
- ռեկտորի հանձնարարականով ԵՄՀ-ի ներկայացում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում, մասնակցություն ԵՄՀ-ի կողմից տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին
- սեփական հետազոտական աշխատանքների արդյունքների տարածման նպատակով ներկայացումների և քննարկումների նախաձեռնում և իրականացում

2.6 Դասախոսի թափուր պաշտոնին կարող են հավակնել այն անձինք ովքեր ունեն³

Կրթությունը.

նվազագույնը մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում համապատասխան ոլորտում, մասնագիտական կրթության տարիներին ցուցաբերած բարձր առաջադիմություն

Աշխատանքային փորձառությունը

մասնագիտական աշխատանքային փորձը ցանկալի է (այն ոլորտում, որի գծով դասախոսը պետք է դասավանդի և վարի դասընթացներ) :

Հմտություններ և կարողություններ

մանկավարժական աշխատանքի հմտություններ
ուսուցման համագործակցային մեթոդների կիրառման հմտություններ

Անձնային հատկանիշներ

³ յուրաքանչյուր ՄԿԾ-ի պահանջներից ելնելով մասնագիտական հստակ պահանջները առավել մանրամասն ներկայացված են աշխատանքային նկարագրերում

ժամանակի կառավարման հմտություններ
ինքնուրույն և թիմում աշխատելու հմտություններ

Հատուկ գիտելիքներ

ուսուցման համագործակցային մեթոդների իմացություն
օտար լեզուների իմացություն
համակարգչային հմտություններ

2.6.1 Պասախոսի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- դասախոսությունների, գործնական պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում (բակալավրիատում),
- կրթական գործընթացի բարձր արդյունավետության ապահովում՝ զարգացնելով ուսանողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները,
- մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների ղեկավարում,
- քննությունների և ստուգարքների անցկացում
- դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերի, օրացուցաթեմատիկ պլանների և դասավանդվող նյութերի(հոդվածներ, դասագրքեր, ներկայացումներ, աուդիո և վիդիո հղվակներ) նախապես վերբեռնում ԵՄՀ վիրտուալ լսարանում
- ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում
- ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
- մասնակցություն կրթական, առարկայական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական ուսումնական այլ նյութերի մշակմանը
- մասնակցություն արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերի մշակմանը և դրանց ղեկավարում
- իր կողմից դասավանդվող նյութերի որակի և արդիականության ապահովում, կրթական բովանդակության թարմացում և վերանայում,անհրաժեշտության դեպքում առարկայական ծրագրի վերանայման առաջարկում և իրականացում
- մասնագիտական վերապատրաստման և ինքնազարգացման նպատակով հետազոտական աշխատանքների իրականացում
- մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
- մասնակցություն ամբիոնի, հրավերի դեպքում մեթոդական և գիտական խորհրդի նիստերին
- ռեկտորի հանձնարարականով ԵՄՀ-ի ներկայացում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում, մասնակցություն ԵՄՀ-ի կողմից տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին
- սեփական հետազոտական աշխատանքների արդյունքների տարածման նպատակով ներկայացումների և քննարկումների նախաձեռնում և իրականացում

2.7 Պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանված տարակարգերին առընթեր բուհում գործում են նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր.

2.7.1 մեթոդական խորհրդատու. բուհում մասնակի, կամ լրիվ դրույքով ձևակերպված մասնագետ, ով ցուցաբերել է մեթոդական բարձր գիտելիքներ և հմտություններ: Այս տարակարգի հիմնական խնդիրներն են իրականացնել դասալսումներ, վարել մեթոդական վերապատրաստման սեմինարներ, թրեյնինգներ, իրականացնել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մեթոդական վերապատրաստմանը նպաստող գործունեություն:

2.7.2 խորհրդատու պրոֆեսոր (դոցենտ). ՀՀ, կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից (ծեռնարկություններից) հրավիրված և բուհում մասնակի, կամ լրիվ դրույքով համա-

պատասխան տարակարգում ժամանակավորապես ձևակերպված մասնագետ: Այս տարակարգի հիմնական խնդիրներն են վարել հատուկ դասընթացներ և գիտամեթոդական սեմինարներ, ներդնել նոր կրթական ծրագրեր և տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ:

2.7.3 հրավիրյալ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս՝ այլ բուհի, ինչպես նաև հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ծեռնարկությունների) համապատասխան տարակարգով և մինչև 0.5 դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որը համալրում է պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքները:

2.7.4 թրեյներ. առանց մանկավարժական ստաժի, կամ գիտական աստիճանի սահմանափակման մասնավոր, պետական, հասարակական հատվածը ներկայացնող գործնական հմտություններով մասնագետ: Այս տարակարգի հիմնական խնդիրն է հիմնավորել ուսանողների, դասախոսների, կամ վարչական աշխատակիցների տեսական գիտելիքները գործնական օրինակներով, ներկայացնել աշխատանքային շուկայի մասնագիտական պահանջները տվյալ ոլորտում:

2.8 Բուհի գիտխորհուրդը կարող է հիմնել և վաստակաշատ պրոֆեսորներին սահմանված կարգով շնորհել պատվավոր պրոֆեսորի տիտղոս՝ առավել ակնհայտ գիտամանկավարժական ավանդի և բուհին մատուցած բացառիկ ծառայությունների համար: Պատվավոր պրոֆեսորի տիտղոս կարող է շնորհվել ինչպես բուհի պրոֆեսորին, այնպես էլ իրենց գործունեությամբ բուհի հետ կապված հայաստանյան և արտասահմանյան գիտնականներին:

2.9 Բուհում վարչական աշխատանքի անցած դասախոսները համատեղության կարգով կարող են մինչև 0.25 դրույք պահպանել իրենց պրոֆեսորադասախոսական տարակարգը և նույն դրույքի սահմաններում մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին, համաձայն սույն կանոնակարգի IV բաժնում սահմանված կարգի: Լիազորությունների ավարտից հետո նրանք ապահովվում են բուհում իրենց գիտամանկավարժական համապատասխան պաշտոնով:

3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

3.1 Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ռեկտորը հաստատում է ընթացիկ տարում պայմանագրերն ավարտելու կապակցությամբ առաջացող թափուր մրցութային տեղերի ցուցակը: Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը պայմանագրային ժամկետը լրանալուց 2 ամիս առաջ տեղյակ է պահում համապատասխան աշխատակիցներին:

3.2 Թափուր տեղերի տեղակալման համար մրցույթները հայտարարվում են ուստարվա ընթացքում:

3.3 Մրցույթի վերաբերյալ հայտարարություն է տրվում ընտրություններից առնվազն երկու ամիս առաջ: Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից սկսած մինչև հայտարարության մեջ նշված ժամկետի ավարտը:

3.4 Մրցույթի մասնակիցները ներկայացնում են դիմում ռեկտորին եւ հետեւյալ փաստաթղթերով.

- անձնագրի պատճեն,
- սոցիալական քարտը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- բարձրագույն կրթության վկայականի /դիպլոմի/, գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները՝ վավերացված սահմանված կարգով,

- բնութագիր վերջին աշխատավայրից, իսկ նորավարտները՝ առնվազն երկու երաշխավորագիր ուսումնառության վերջին վայրից:
- հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը:
- գինգրքույկ (ըստ անհրաժեշտության)
- սանիտարական գրքույկ:

- 3.5 Մրցույթի մասնակիցների փաստաթղթերը ռեկտորի (պրոռեկտորի) համապատասխան մակագրությամբ ուղարկվում են ամբիոնի քննարկմանը:
- 3.6 Ռեկտորը, ամբիոնի վարիչն իրավունք ունեն մրցույթի մասնակցին հանձնարարել տեսական սեմինարներ եւ գործնական պարապմունքներ: Դասախոսության թեման հանձնարարվում է ամբիոնի, կամ ֆակուլտետի կողմից ուսումնական պլանի եւ ծրագրի շրջանակներում:
- 3.7 Ամբիոնն (ֆակուլտետը) իր գրավոր եզրակացությունը ներկայացնում է մրցութային հանձնաժողովին:
- 3.8 Մրցույթի մասնակիցների վերաբերյալ բոլոր նյութերը քննարկվում են համապատասխան ամբիոնի նիստում: Թեկնածությունը քննարկելիս ամբիոնի նիստը վարում է ամբիոնի վարիչը/ֆակուլտետի ղեկանը:
- 3.9 Ամբիոնը (ֆակուլտետը) բաց քվեարկությամբ, եթե այլ որոշում չի կայացվել, ընդունված գրավոր կարծիքը ներկայացնում է ֆակուլտետի/ամբիոնի մրցութային հանձնաժողովին: Նշված հանձնաժողովը ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված նյութերը, ինչպես նաեւ մրցույթի մասնակիցների կարգացած դասախոսությունների, անցկացրած սեմինար եւ գործնական պարապմունքների վերաբերյալ ամբիոնի եզրակացությունները, եթե այդպիսիք եղել են, եւ ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ գրավոր եզրակացություն:
- 3.10 Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման գծով հանձնաժողովը իրավասու է մրցույթի մասնակիցներից եւ ամբիոնի վարիչներից պահանջելու պարզաբանումներ կապված մրցութային ընտրության հետ:
- 3.11 Ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների, ասիստենտների, դասախոսների մրցույթն անցկացվում է ֆակուլտետների խորհուրդներում/ամբիոնների խորհրդներում:
- 3.12 Մրցույթով անցած ամբիոնի վարիչներն ու պրոֆեսորները հաստատվում են ԵՄՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 3.13 Բուհում աշխատած հավակնորդների համար ներկայացվում են նաեւ ուսանողների կողմից նրա գործունեության գնահատման արդյունքները, որոնք ստացվում են ԵՄՀ որակի ապահովման կենտրոնից:
- 3.14 Մրցութային մասնակիցների դիմումները քննարկելու համար համալսարանի գիտական խորհրդի եւ ֆակուլտետի խորհրդի (առկայության դեպքում) կողմից բաց քվեարկությամբ (եթե այդ նասին այլ որոշում չի կայացվել) ընտրվում են մրցութային հանձնաժողովներ, որոնք ձեւավորվում են հիմնականում տվյալ խորհրդի անդամ պրոֆեսորներից եւ դոկտորներից: Հանձնաժողովը կազմվում է գործում է ուսումնական տարվա ընթացքում: Հանձնաժողովի նախագահը նշանակվում է հանձնաժողովի անդամներից, ռեկտորի կողմից:
- 3.15 Մրցութային մասնակցողների ցուցակը (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան թիվ, աշխատանքի վայր, զբաղեցրած պաշտոն, գիտական կոչում եւ աստիճան, կրթություն, տվյալ մասնագիտությամբ աշխատանքային ստաժ) տրվում է խորհրդի անդամներին եւ փակցվում ֆակուլտետում/ամբիոնում խորհրդի նիստից 7 օր առաջ:
- 3.16 Փակ (զաղտնի) քվեարկության համար մրցույթի բոլոր մասնակիցների ազգանունները նշվում են մեկ քվեաթերթիկի մեջ: Թեկնածության վերաբերյալ համաձայնությունը, կամ մերժումը ներկայացվում է համապատասխանաբար «կողմ», կամ «դեմ» բառերի ջնջումով: Մնացած դեպքերում, քվեաթերթիկը համարվում է անվավեր:

- 3.17 Ձայները հաշվելու համար խորհուրդը քվեարկությունից առաջ ընտրում է խորհրդի երեքից ոչ պակաս անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովը հրապարակում է յուրաքանչյուր թեկնածուի քվեարկության արդյունքը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է խորհրդի կողմից եւ կցվում մրցութային փաստաթղթերին:
- 3.18 Խորհրդի որոշումը համարվում է օրինական, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի կազմի 2/3-ը: Քվեարկողը համարվում է մրցույթն անցած, եթե հավաքել է խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների 50%-ից ավելին:
- 3.19 Խորհրդի որոշումը կարող է ներկայացվել բողոքարկման ռեկտորին՝ 7 օրվա ընթացքում:
- 3.20 Ռեկտորն իրավասու է բեկանելու մրցույթն անցկացրած խորհրդի որոշումը, եթե արձանագրվել է կանոնակարգից շեղում:
- 3.21 Մրցույթին դիմած անձինք կարող են մասնակցել խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է իրենց թեկնածությունը:
- 3.22 Արգելվում է հղի, կրծքով կերակրող, ինչպես նաեւ մինչեւ 3 տարեկան երեխա ունեցող մայրերին վերջիններիս հղիության, կրծքով կերակրելու, կամ երեխային խնամելու շարժառիթով մրցութային գրաֆիկ չընդգրկելը, կամ մրցույթով անցնելուց հետո նույն շարժառիթներով նրանց հետ պայմանագիր չկնքելը:
- 3.23 Համալսարանում ժամավճարով դասավանդողները, ինչպես նաեւ 0,25, կամ 0,5 դրույքով համատեղողները առանց մրցույթի հրամանագրվում են ռեկտորի կողմից:
- 3.24 Ռեկտորը (դեկանը) իրավասու է համալսարանի գիտական խորհրդին (ֆակուլտետի խորհրդին) ներկայացնելու զբաղեցրած պաշտոններում դասավանդող դասախոսների համապատասխանության հարցը: Եթե խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ հաստատագրում է պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի, սեմինարավարի անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնում, ապա ռեկտորը խորհրդի որոշումն ընդունելուց մեկ ամիս հետո վերջինիս ազատում է աշխատանքից:
- 3.25 Դասախոսների պաշտոնների համապատասխանության մասին խորհրդի (ֆակուլտետի) որոշմանը նախորդում է դասախոսի աշխատանքային գործունեության ստուգումը համալսարանի (ֆակուլտետի) գիտական խորհրդի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից:
- 3.26 Հանձնաժողովի կազմը հաստատում է ռեկտորը:
- 3.27 Ռեկտորն իրավասու է հանձնաժողովում ընդգրկելու այլ բուհերի, գիտական հաստատությունների աշխատակիցների:
- 3.28 Նշված հանձնաժողովի նյութերն ուղարկվում են ընդհանուր համալսարանական (ֆակուլտետային) հանձնաժողով, որը հիմնավորում է դասախոսի՝ կոնկրետ անձի զբաղեցրած պաշտոնում համապատասխան լինելը: Հանձնաժողովի եզրակացությանը եւ ներկայացվող նյութերին դասախոսը կարող է ծանոթանալ նիստից մեկ շաբաթ առաջ:
- 3.29 Ամբիոնի բաժանման եւ ամբիոնների միավորման ժամանակ արգելվում է դասախոսների՝ վաղաժամկետ մրցույթի անցկացումը:
- 3.30 Պայմանագրի ձեւակերպման մերժումը կարող է բողոքարկվել դատարանում՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

4. ՊԱՏՎԱԿՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պատվավոր պրոֆեսորի տիտղոս/կոչում շնորհելը.

Նշանակումների հանձնախմբի՝ ռեկտորի հետ համաձայնեցված առաջարկությամբ համապատասխան ֆակուլտետի խորհուրդը բաց քվեարկությամբ կարծիք է ներկայացնում ԵՄՀ գիտխորհուրդ պատվավոր պրոֆեսորի տիտղոսի/կոչման թեկնածության վերաբերյալ: Այդ կարծիքի հիման վրա ԵՄՀ նշանակումների հանձնախումբը կազմում եւ գիտխորհրդին է

ներկայացնում զեկուցագիր՝ ԵՄՀ պրոֆեսորներին եւ արտասահմանյան երկրների վաստակաշատ գիտնականներին ԵՄՀ պատվավոր պրոֆեսորի տիտղոս/կոչում շնորհելու մասին:

Պատվավոր պրոֆեսորի տիտղոս/կոչում շնորհելու համար կարող են հիմք հանդիսանալ.

- միջազգային ճանաչում ունեցող գիտական ուղղության, կամ դպրոցի ստեղծումը,
- ԵՄՀ զարգացման համար որոշիչ նշանակություն ունեցող բարեփոխումների նախաձեռնումը եւ իրականացումը:

Պատվավոր պրոֆեսորի տիտղոսի/կոչման հավակնորդի գործի քննարկումն ընթանում է գիտխորհրդի նիստում: Փակ (գաղտնի) քվեարկությամբ դրական որոշում ընդունելու դեպքում Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտորատը կանոնադրությամբ սահմանված կարգով հավակնորդին շնորհում է պատվավոր պրոֆեսորի տիտղոս/կոչում:

- 4.2 Խորհրդատու պրոֆեսորի, դոցենտի պաշտոնների հավակնորդները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան ամբիոնի վարիչին, կազմակերպվում է հավակնորդի հարցի քննարկումը ամբիոնի նիստում 1 շաբաթվա ընթացքում: Նրա թեկնածությունը համաձայնեցվում է ֆակուլտետի նշանակումների հանձնախմբի, ֆակուլտետի ղեկանի, ուսումնական բաժնի հետ եւ նրա գործը ներկայացվում է ռեկտորին/պրոռեկտորին՝ պայմանագիր կնքելու համար:
- 4.3 Ռեկտորը մրցույթների արդյունքների հիման վրա կնքում է պայմանագիր պրոֆեսորների, դոցենտների, դասախոսների և ասիստենտների հետ փաստաթղթերի ստացման օրվանից հետո 10-օրյա ընթացքում:
- 4.4 Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը կարող է առաջարկվել պրոռեկտորի կողմից ամեն անգամ ռեկտորի համաձայնության առկայության դեպքում:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 5.1 Պայմանագիրը կարող է լուծարվել աշխատանքի կազմակերպման պայմանների, ուսումնական ծրագրերի փոփոխման, ինչպես նաև ուսանողների թվաքանակի կրճատման դեպքում:
- 5.2 Պայմանագրում նշված պարտականությունները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:
- 5.3 Պայմանագիրը կարող է լուծարվել նաև անձի մասնագիտական գիտելիքների անբավարարության պատճառով, ամբիոնի մասնագիտական եզրակացության հիման վրա: